



# Հ Ա Ն Գ Է Ս Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը: Տարեկան գինն է մէկ լիրա օսմանեան: Մէկ քերթը, 40 փարա արժար: Համակ կամ ո եւ է գրութիւն պետք է ուղղել Ա. Մ. Գափամանեան կոստանդ. Երկուցիս, Մերձան չարդի Բիւշտի Էֆենտի խանի տակ Մ. Կ. Սարգեանի տպարանը:

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 122

1880

ՇԱԲԱԹ 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ

## ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Որովհետեւ մեր շաբաթական տեսութիւններն օրուան խնդրոց կը վերաբերին, բնական է թէ դարձեալ սովէն պիտի սկըսիմք մեր ներկայ յօդուածն, ըստ որում այս է օրուան մեծ և ընդհանուր խնդիրը:

Է՛հ, ըսեն, գուցէ ընթերցողք, տեղեկանալով խնդրոյն պարագայիցը՝ կը գալարի սիրտերնիս, խորին ցաւով կը լցուի, և կ'օգնեմք մեր կարօտեալ եղբարց, սակայն ի՞նչ կուզայ ձեռուհուս, քանի որ պատճառը վերջնեալ մեր կարողութենէն վեր է:

Արդարեւ շատ ճշմարիտ է այդ առարկութիւնն և մեք յոյժ գոհ կը լինիմք, եթէ ամեն մարդ գիտնայ և համոզուի թէ սովորոց օգնելն ամենամեծ ազգասիրութիւն է, մանաւանդ այս միջոցիս, յորում՝ ինչպէս յայտնի է եղած հրատարակութիւններէն, սոյն յոյժ սաստկանալու կերպարան առած է:

Եթէ կայ Հայաստան մը, ուր Հայոց մե-

ծամանութիւնը կը բնակի, և եթէ կայ Հայկական խնդիր մը, որ Օսմանեան Հայաստանի բարգաւաճմանը կը վերաբերի, ուրեմն պէտք է որ Հայն Հայաստանի մէջ սովամահ չկորնչի:

Ուստի ի՞նչ պէտք է ընել. — ճշմարիտ ազգասիրութեան ամենամեծը պէտք է ի գործ դնել իւրաքանչիւր Հայ ամեն տեղ և ամեն ատեն յիշէ թէ՛ սով կայ ի Հայաստան և ինք երբ ուտէ, միտքը բերէ թէ Հայն ի Հայաստան անօթութենէ կը մեռնի. երբ հագուի, երևակայէ թող թէ՛ Հայն ի Հայաստան ցուրտէն կը սառնի, և երբ հոս իր որդիքն ու ընտանիքը կերակրէ և սլափապարէ, չմոռնայ երբէք թէ անդին թշուառ Հայու տղաքներ անօթութենէ կը նուաղին և ցուրտէ կը շնչասպառ կը լինին, և ահա աղանք ալ իւր դաւակունքը, իւր եղբարքն և իւր քոյրերն են:

Արդ, խնդիրը վճռական է. Հայը կամ պէտք է ապրի և կամ ոչնչանայ:

Այս կէտիս վրայ կը հրաւիրեմք բոլոր ազգայնաց խորին ուշադրութիւնը :

\* \* \*

Զարմանօք կարդացինք Վաղըթի այն քանի մը տողերն , ուր խորհուրդ կուտար Բ. Դրան Սովեւոյ Խնամող Կեդր. Պատ. Յանձնաժողովէն հաշիւ պահանջելու , աւելցնելով թէ՛ նուիրատուք ալ հարկաւ դո՛հ կը լինին այսպիսի անօրէնութենէ մը :

Զարմանօք ըսինք , վասն զի երբ սովեալ Հայն իր պատան մը հացէն մաս մ'ալ իր Թուրք և Քուրդ հայրենակցին կը նուիրէ առանց ազգի և կրօնի խտրութեան , կ'սպասէինք որ Թուրք լրագիրք ալ օգնութեան հրաւեր կարդային , Հայոց անխտրութեան օրինակին հետեւին և այնպիսի օգտակար միջոցներ առաջարկէին , զորս կառավարութիւնն իր արդի ծանր դրազմանցը մէջ գուցէ խորհելու միջոց չունենայ :

Օրինակի համար՝ կրնային առաջարկել որպէս զի տրոց հաւաքման մասին խստութիւնն հարկին առջև գէթ թեթեւնայ . ազգու հրաման տրուի տեղական կառավարութեանց , որպէսզի արմտեաց փոխադրութիւնը դիւրացնեն և ապահովեն , հնձոց պահպանութեանն հսկեն ընդդէմ՝ յարձակմանց՝ որք մերթ ընդ մերթ կը պատահին անկարգ անձանց կողմէ և թէ տեղական կառավարութիւնք ամբարեալ ցորենները գէթ չափով մը հասարակութեան ծախելու արտօնութիւն ունենան , և ուրիշ ասոնց նման խնդիրներ :

Երկրին և կառավարութեան շահն ալ կը պահանջէ որպէսզի ազգու և արագ միջոցներ ձեռք առնուին տիրող սովուն առաջըն առնելու համար , որ արդէն աղէտ մ'է , և երբ Հայք ըստ կարի կը ջանան գտնէ թեթեւցելու , զարմանալի է որ Թուրք լրագիրք փոխանակ օգնելու և օգնութեան յորդոր և հըրաւեր կարգալու և օգտակար միջոցներ ա-

ռաջարկելու՝ այնպիսի խննաստեղծ խնդիրներ մէջ կը նետեն , որոցմէ չեմք կարծեր թէ իրենցմէ զատ ուրիշ դո՛հ եղողներ գտնուին :

Սովեւոյ Խնամող Կեդր. Պատ. Յանձնաժողովն արդէն քանիցս իր համարատուութիւնն հրատարակած է . իրմէ սչոք կը կասկածի և նորա իւրաքանչիւր անդամներն ալ խիստ պատուաւոր , տէրութեան ծանօթ և ընդհանուր վստահութեան արժանի անձինք են , որք սովեալները խնամելու պաշտօնն իրենց վրայ առնելով Ազգին և թէ տէրութեան ամենամեծ ծառայութիւն կը մատուցանեն , որ գոհութեան և շնորհակալեաց արժանի է :

Նոյնպէս և խորին շնորհակալեաց արժանի են երբեմն երբեմն տէրութեան կողմէ եղած շնորհներն ալ և յոյս ունիմք թէ հիւանդանոցի հացն ու միսը դարձեալ կը շնորհուի , Ազգին բազմադարեան ծառայութիւնները կը վարձատրուին , խոստացեալ բարենորոգմունք ի գործ կը դրուին և հետևաբար Վեհ . Սուլթանին կամայն հակառակ՝ դաւառաց մէջ ղեղձմունք դադրելով և ըստ ամենայնի ապահովութիւն հաստատուելով՝ տո՛ղոսութեան և գանդատանաց տեղի տրուող պատճառները միանգամ ընդ միշտ կը բարձուին :

\* \* \*

Երբ այս տողերը կը գրէինք , միտունիս եկաւ դարձեալ Վաղըթի մէկ յօդուածը , զոր գրած էր իւր այս չորեքշաբթի աւուր թուովը :

Վաղըթի խճրժանաց (վասնզի քննադատութեան սահմանէն դուրս է) առարկան է Ամեն Ս. Պատրիարք Հօր մէկ անօրէնութիւնը , զոր բրած էր Ս. Փափաղեան էֆէնտիի Մամուլի դէմ բացած դատն առ Մեծ. Դատական Խորհրդական էֆէնտիին յանձնելով :

Վաղըթ կը զարմանայ և չգիտնալով կամ չգիտնալ ձևացնելով կը հարցնէ թէ՛ դատա-

կան խնդիր մը Ս. Պատրիարքն ինչպէս ի բըն- նութիւն կը յղէ :

Մեր ալ կ'ըսեմք . — արդարև խիստ զարմանալի է որ մարդ լրագիր հրատարակէ և սակայն գոնէ տէրութեան օրէնքները չը գիտնայ :

Վազըթ պէտք է որ աշխատութիւն յան- ձըն առնու և սորուի ու գիտնայ թէ զուտ ազգային ներքին դատերը Պատրիարքը տես- նելու և գատելու արածնութիւն ունի, որ Յաթիհ Սուլթան Մէհմէտի օրով հաստատ- ուած և ապա տէրութենէն չնորհուած ու « Գեորգիան մէջ անցած Սահմանադրութեամբ ալ նուիրագործուած է :

Տէրութեան օրէնքներն ու կանոններն յարգել և ըստ այնմ վարուիլն հպատակաց պարտաւորութիւնն է, և փոխադարձաբար տէրութենէն չնորհեալ արածնութիւնները վա- յելեն ալ հպատակ ազգաց իրաւունքն է :

Արդ, ստուգիւ խիստ զարմանալի է որ Վազըթ գէթ այսպիսի խիստ պարզ սկզբ- բունքներու ծանօթութենէն անդամ զուրկ կը գտնուի եղեր, և ահա պատճառն այս լի- նելու է որ թէ ինք և թէ իրեն համանման թուրք լրագիրք միշտ այնպիսի խնդիրներով կ'զբաղին, զորս յաւէտ ուսանելու պէտք ու- նին և կը հրատարակեն այնպիսի դրդ ուիչ յօդուածներ, որք հարկաւ հակառակ են կա- ռավարութեան կամայք, վասնզի կրնամք դիտնալ թէ Գեորգիան չուզէր ջնջել :

Ուստի Վազըթ և թէ իւր նմաններն ա- ղէկ կ'ընեն որ դրեղէ առաջ խնդիրն ուսում- նասիրեն նախ, եթէ կ'ուզեն երկրին և տէ- րութեան իրական ծառայութիւն մատուցա- նել :

\* \* \*

Ընթերցողք ըսեն թերևս թէ յիշեալ եր- կու խնդրոց վրայ շատ զբաղեցանք .

Դառնամք ուրեմն քիչ մ'ալ ուրիշ խնդ- րոց :

Կ'ըսուի թէ Գեր . Տիգրանեան մտադիլ է եղեր իր հայրենիքը վերադառնալու :

Ի՞նչ է . ինչպէս եկաւ, կրնայ այնպէս երթալ . վասն զի այդ բանն իր կամքէն կա- խում ունի . բուն խնդիրն՝ ըստ մեզ, սա է թէ այդ մարդն ինչո՞ւ համար բերուեցաւ և ինչ եղաւ :

Չայնքեր կային ազոր նկատմամբ, ամ- բաստանութիւններ կը լինէին և ահա Ազգ . Վարչութիւնն ի Պօլիս կոչեց զայն . սակայն արդեօք քննուեցա՞ն իրեն վրայ եղած ամ- բաստանութիւնները, խնդիրը պարզուեցա՞ւ և թէ Տիգրանեան յանցաւ՞ որ է, թէ ոչ :

Մեր գիտցածին նայելով՝ խնդիրը նայ- ուած անդամ չէ :

Եթէ ստոյգ է, շատ զարմանալի է, եւ չեմք գիտեր թէ ինչ կը նշանակէ այսպիսի ըն- թացք մը, որ ոչ այս է, և ոչ այն :

Մեր խնդիրն սկզբունքի վրայ է . անձի հետ ընաւ դարձ չունիմք :

Մեր պէտք է որ ներքին ուրոշ դրութիւն մ'ունենամք, և գիտնամք թէ ինչ է մեր ըն- թացքն և ինչ լինելու է . կամ բոլորովին օ- բէնքով չարժելու եմք և կամ բոլորովին ա- ռանց օրէնքի, և հետևաբար պէտք է հըռ- չակեմք թէ մեր մէջ քննութիւն և դատաս- տան կը լինի, կամ ոչ :

Եթէ ոչ, ինչո՞ւ ուրեմն այս ու այն Պօ- լիս բերել կուտամք, ինչո՞ւ վարչութիւն կը հաստատեմք, ինչո՞ւ, կ'ըսեմք Սահմանադրու- թիւն ունիմք և սահմանադրական եմք :

Ուստի եթէ Սահմանադրութիւն և սահ- մանադրական վարչութիւն ունիմք, պէտք է որ օրինօք շարժիմք և օրինօք ընթանամք և հետևաբար անաչառ քննութիւն և դատաս- տան ընելով՝ պատժեմք զայն, որ օրինաց առջև յանցաւոր է, և վարձատրեմք զայն, որ թէ օրինաց համաձայն կ'ընթանայ և թէ առ Ազգն ճշմարտապէս կը ծառայէ :

\* \* \*

Քիչ մ'ալ ուրախալի տեղեկութեանց անցնումք :

Հանդիսիս վերջին թուովը կը ծանուցանէինք թէ Հայոց Միացեալ Ընկերութիւնն իր նիստերը կը շարունակէ :

Իւր վերջին նստին մէջ հետեւեալ կարեւոր որոշումներն ըրաւ , զորս կը փութամք գոհութեամբ հրատարակել :

1. Միաձայնութեամբ մերժեց Տնօրէն Ժողովոյ հրատարականն և խնդրեց որ աղբարարար շարունակէ իւր պաշտօնը :

2. Ամեն Ս. Պատրիարք Հօր և Սովերոյ Խնամող կեդր. Պատ. Յանձնաժողովոյ առաջարկութեան վրայ որոշեց Սղերդի մէջ վարժարան մը բանալ և այս մասին յանձնարարեց Տնօրէն Ժողովոյ որ Սովերոյ Յանձնաժողովին հետ բանակցի :

Հարկ է ըսել թէ Սղերդի ազգայինք հայերէն չգիտեն , առհասարակ արաբերէն կը խօսին և զուրկ են դպրոցէ :

3. Սամսոնի առաջնորդական արժ. Տեղապահին և Թաղ. Խորհրդոյ առաջարկութիւնն՝ որով կը խնդրէին իրենց վարժարանի տեսչութիւնն Ընկերութեան յանձնել տարեկան 200 ոսկի գումարով մը , ընդունեց և յանձնարարեց Տնօրէն Ժողովոյ , որպէսզի բանակցի պայմանաց մասին և ապահովութիւն ձեռք բերելով պարտ ու պատշաճն ի գործ դնէ :

4. Պիւտճէի խնդիրը վերապահեց մինչ ի յառաջիկայ նիստ , որ տեղի պիտի ունենայ ամսոյս 29 ին :

Ինչպէս կ'երևայ , խիստ կարևոր որոշումներ են , և գոհութեամբ կը տեսնուի որ Ընկերութիւնն իր գործերու սահմանը կ'ընդարձակէ յօգուտ գաւառացւոց :

Գաւառական վարչութիւնք խիստ լաւ կ'ընեն , եթէ Սամսոնց օրինակին հետեւելով գաւառական վարժարանաց տեսչութիւնն յիշեալ ազգօգուտ ընկերութեան

յանձնեն , որով թէ իրենք օգուտ կը քաղեն և թէ վարժարանք միօրինակ դրութեամբ կ'ընթանան :

Խիստ դահայուցիչ է նաև տեսնել թէ Ընկերութեան նիստը շատ բարեկարգ է եւ անդամոց մէջ ներդաշնակութիւն և համաձայնութիւն կայ , և առ հասարակ ամենքն ալ կ'աշխատին Ընկերութեան ապագան ապահովելու և առ այս հարկ եղած ջանքերը կը նուիրեն :

Եւ երբ Ընկերութիւնն այսպէս եռանդով կը ծառայէ , հարկ է որ իւրաքանչիւր ազգային ալ փութայ քաջաբերել զայն կամ ընկեր դրուելով և կամ մերթ ընդ մերթ նըւէրներ տալով , որովհետև մեղուաշան ընկերութեան ջանից և աշխատութեան օգուտն ընդհանուր Ազգին է և նորա ապագային կը վերաբերի :

Ուստի ամեն Հայ պարտաւոր է կամ աշխատութեամբ , կամ դրամական զոհողութեամբ և կամ ո՛ր և է միջոցով օգնել կըրթական ընկերութեանց , որ Ազգին ու Հայրենեաց ապագային համար անխոնջ ճգամբ կ'աշխատին և դէպ ինչպատակ դիմելով քաջաբերուելու անժխտելի իրաւունք կ'ստանան :

\* \* \*

Օրուան խնդրոց մին ալ Կիլիկիոյ կաթողիկոսական յարաբերութեան խնդիրն է , որ այս օրերս երևան ելած է :

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին ձեռնասուն Արժ. Ներսէս վարդապետ Թէրճէմանը—էֆ. քեար լրագրոյ 1003 թուոյն մէջ հրատարակած մէկ նամակովն այս խնդիրը կը յուզէ և այս առթիւ Արարատեան Աթոռոյն Տ. Փիլիպոս և Կիլիկեան Աթոռոյն Տ. Ներսէս երջանկայիշատակ կաթողիկոսաց իրարու հետ ըրած միութեան և դաշնադրութեան մը խօսքը կ'ընէ

Իրիւ օրուան խնդիր՝ յիշեալ դաշնա-  
դրութիւնն հետաքրքրական ըլլալով՝ իւրա-  
քանչիւր ազգային հարկաւ կը փափաքի կար-  
դալ զայն և տեղեկանալ :

Այս մասին մեր ընթերցողաց ծառայու-  
թիւն մը մատուցանելու նպատակաւ կը խոս-  
տանամք յառաջիկայ թուով հրատարակել :

**ՆԵՐՔԻՆ ՎԻՃԱԿ**

Մեր ինչ որ կը գրկինք ասկէ առաջ մեր ազ-  
գային ներքին վիճակին նկատմամբ և ինչ գիտողու-  
թիւններ որ կը յայտնէինք առաջնորդական, վանօ-  
րէից, սեպհակամութեան և այլ խնդրոց վրայ, որ  
ըստ ամենայնի լքեալ են, նոյնը կը հաստատեն  
նաև Մեծ. Տորթոք Յ. Շիշմանեան, Պ. Վասիլեան  
և Մ. Փորթուզալեան էֆէնտիներն, որ Հայաստա-  
նէն աստ վերադարձած են, և որք առիթ ունեցան  
ամեն բան մտէն գննելու և գաւառացոց վիճակին  
տեղեկանալու :

Մեր չեմք ուզեր գիտնալ թէ ո՞վ է և ո՞վ է-  
ղաւ պատճառ մեր ներքին վիճակի խնդրոյն յետա-  
ձրգմանն, որ յայտնի է թէ խիստ թանկագին կա-  
րուստ մ'է, կորստա ժամանակի, և վերջապէս՝  
կորուստ ամեն բանի համար :

Սակայն կըսէինք, և կըսեմք թէ եղածն է-  
ղած է, անցեալն արտասպառ բնաւ օգուտ չունի,  
ուստի պէտք է որ անցելոյն կորուստն ինտասու-  
թեամբ դարմանեմք և անցնիմք անսխալագէտ մեր  
ներքին վիճակը բարեօրէնելու խնդրոյն, որ անհրա-  
ժեշտ է :

Ինչպէս կըսէր Նարոյժօն Ա. իր զօրացը թէ՝  
« զօրականք, Եգիպտոսի բրգունքն զձեզ կը գիտեն,  
այսպէս և մեր կըսեմք թէ սպառքան զձեզ կը գիտէ :

Որքեմն թողումք ամեն բան, թողումք ստուէրն  
և ահա սոսոյգ և իրական ապագայի համար աշխա-  
տիմք, սպառքայի, որ ներկայէն կախում ունի :

**Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ**

Հանդիսիս տպարանին մէջ ամեն տեսակ  
գիրք, տետրակ, տոմսակ ևն խիստ մաքուր  
և աժան գնով կը տպուին, և ամեն կարգի  
յաճախորդք ըստ ամենայնի գոհ կ'ըլլան :

**ԶՈՒԱՐՃԱԼԻՔ**

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

**Ս. Թ Ը Ն Կ Ը Ր Ե Ա Ն**

Ահա ասիկ երիտասարդ մը՝ զոր Սահմանադրու-  
թեան հաստատութենէն ի վեր ճանչցած եմ, և ո-  
րո՞ւ ազգային կեանքն ալ շատերու՝ ինչպէս նաև  
ինձի պէս մեր ազգային յեղափոխութեան թուա-  
կանէն կոխի :

Տարիքը ճշգիւ չեմ յիշեր. կարծեմ թէ ասի-  
կոյ ինձի յանցանք մը չէ. բայց թէ որ յանցանքի  
կարգ դնեն, ան աստե՛ն իրեն կը դիմեմ, որպէս զի  
դատս սրաշտպանէ, ինչպէս որ կը սրաշտպանէ այն-  
պիսի դատեր, որ հետաքրքրական ըլլալով՝ լսողին  
հետաքրքրութիւնը կը չարժեն :

Իմ դատս չհասկնան ընթերցողք. ես իմ դա-  
տըս կրնամ վարել, որովհետև շատ սրարդ է, բա-  
ղադրեալ չէ. երբ բաղադրեալ ըլլար, անշուշտ ի-  
րեն կը յանձնէի :

Ուրախ դուարթ տեղէ տեղ ցատկերուն համար  
զինքը ձուկի կը նմանցնեն ոմանք, և ես ալ ասկէ  
հետեցնելով կըսեմ թէ՝ Ս. Թընկերեան փետրվար  
ամսոյ մէջ ծնած ըլլալու է անպատճառ :

Սա հարուստ գերդաստանի մը վերաբերելով՝  
ծնողքը մինչև ինը տարու զինքը տան մէջ պահած  
և ատենին դատախարակութեամբ կրթած և մայրենի  
լեզուին հետ՝ յունարէնի պարսպպեցուցած են :

Զինքն այսպէս ժամանակ մը առանին դատախա-  
րակութեամբ կրթելուն պատճառն արդեօք իւր  
ծնողքը դատախարակութեան մասին Ժ. Ժ. Ռուսօի  
կարծեացն հետևող ըլլալն է, թէ՛ հարուստ ըլլալ-  
նուն համար իրենք ալ ընդհանրապէս հարուստներու  
սովորութեանն հետևեր են :

Խնդիրը կրթութեան վերաբերելուն՝ կրթական  
Մեծ. Թորհրդականին վճույն կը յանձնեմք :

Իւր ծնողքը մինչև ինը տարի զինքը տանը մէջ  
պահելէ յետոյ՝ Վիէննացոց Բերայի վարժարանը  
գրին, ուր տեղի գաստտուներէն մին ալ հանրաճա-  
նօթ Ա. Մ. Գարադաշեանն էր :

Ս. Թընկերեան արիչ ուսմանց հետ մայրենի  
լեզուն և ազգային պատմութեան ալ պարսպած է-  
սակայն սա աղէկ չեմ գիտեր թէ ինք ալ արդեօք  
իւր վարժապետին պէս Հայաստանը Գուրդատա՞ն

կ'անուանէ թէ՛ Հայաստան : Պէտք է որ այս մասին կարծիքը բացատրէ , ինչպէս որ կը բացատրէ իր շատ մը կարծիքները դատարանաց առջև՝ ընկերութեան և շոգենաւնեցող մէջ , իւր գրասենեակին և վերջապէս ամեն տեղ՝ ուր որ կը խօսի և իւր մեծապատիւ ունիւղիւրներն և աղնուափայլ ունիւղրուհիները մտիկ կ'ընեն զինքը մեծ հաճութեամբ և առանց ճանձրանալու , թէ և ինք առանց ուրիշի լէօպէթ տալու որ խօսի , և թէպէտ մախարայի պէս կըբըլ կըբըլ խօսի :

Այն՝ որուն կենսագրութիւնը կը գրեմք , իւր մտացն աւելի անունդ գտնելու և զայն առաւել գուհայնելու համար 1857 ին բազմահմուտ Հայր Յովսէփ Գոթթրեմանի հետ Վիէնայի վանքը դնաց և հոն ինն ամիս մնայէ ետև՝ մեծապատիւ բժշկաց խորհրդով Պոլիս վերադարձաւ , որովհետև իւր տըկար կազմութեանն համար յիշեալներն ուսմանքէ արգիւեցին զինքը :

Ս. Թնկրեան Պօլսոյ մէջ իւր առողջութիւնը գտնելով՝ փորձեց հասկցաւ որ մեծապատիւ բժշկաց կարծիքը ճիշդ չէ եղեր , և կամ Պօլսոյ կլիման ըրծըկաց կարծիքն աւելի դրոսկան է եղեր , իւր մանկութեանը վարժապետ՝ փաստարան Պ. Ֆիլիպոսին հետ շունչը շիտակ Եւրոպա առաւ , և դարձեալ ուսման պարագայաւ :

Հոս խնդիր մը կ'ենէ մեր առջև , այսինքն թէ՛ մեծապատիւ պարոն բժիշկներն իրենց կարծիքը փոխեցին արդեօք , թէ դարձեալ նոյն կարծիքին վրայ են :

Այս ալ պէտք է Մոլիերի ախամոյ հիւանդին հորցնել :

Եւրոպայէն վերադարձին այլ ևս վերջնական կերպիւր Պոլիս հաստատուեցաւ , ուր սկսաւ իւր ծընողաց հարստութիւնն ուտել , ինչպէս որ կ'ընէին ժամանակաւ ամիրաներու գուհիներն ընդհանրապէս :

Միայն սա տարրերութիւնը կայ որ Ս. Թընկրեան այդ հարստութիւնը միակ ինք չկերաւ . 1863ին Համազգային տպարան անուամբ վերստին բացաւ Արևելեան տպարանն , որ ժամանակէ մը ի վեր գոյուած էր ( խախտուած չհասկցաւ ) :

600 կըրիկ ոսկիներ միայն ատոր օժխտ տըռուաւ , և ուր աղգասիրտբար ճրի տպագրել առաւ բազում երկասիրութիւններ , որոց տպագրութեամբ իւրոյ ընծայուին ինք օգնակար կը դատէր Ազգին համար :

Երեք ամսոյ շափ ալ ինձ Մեկենաս եղաւ , Զեմիւր Հայրենեաց անուն թերթիս հրատարակելով :

Նոյն տարեցն մէջ , 1863ին , բարեխառակ Արևելեան Թատրոնին յառաջալսմանն ալ շատ աշխատեցաւ , և անա 1865ին բաւրսովին իր վրայ մնաց և անկէ ալ մեծկակ գուճար մը կերաւ խմեց և յիշեալ Թատրոնն ալ այս Թատրոնին իր շունչն ի գերեզման առաւ , ուր ի հանդիստ կը ննջէ իր անցեալ փառաց երազներովը :

Տպարանին և թատրոնին հետ Թընկրեան էֆէնտի քսակն ալ կը գոյուի , և կամ՝ ինչպէս կ'ըսեն սովորաբար , ջուրը գաւաթին յատակը կ'իջնէ , և ինք ալ կ'սկսի գլուխն առաջին կոխել , ինչպէս որ կ'ընեն սովորաբար զրպանին կուտ մը շունչեցողները :

Թընկրեան էֆէնտի փոխանակ ինծի պէս խմբագրութեան տապարէզը նետուելու և հոն՝ գըրականութեան պաշտպանութեան (հա՛ , հա՛ , հա՛) հարուած կրելու և իր պատիւն ու աղագանն ալ վրայ տալու (որովհետև այս է մեր աղգային գրագիտաց վարձքը) , ինքզինք վերստին ուսման տուաւ , իրաւադիտութիւն ուսանելու պարագայաւ և զայն իրեն արուեստ ընտրեց :

1868ին վաստաբանաց կարգը մտաւ և հոն՝ իր ջանքովն ու տոկուն աշխատասիրութեամբն առաջիններէն մին եղաւ և իր հանձնարը փայլեցուց :

Ուստի շատ ապէկ ըրաւ որ փոխանակ խմբագիր կամ հեղինակ ըլլալու՝ վաստաբան եղաւ :

Սակայն ասկէ ալ հետեցնելու չէ թէ պէտք է որ ամեն Հոյ փաստարան ըլլայ :

Մեր մէջ ընդհանուր սովորութիւն դարձած է որ երբ ճարտար բժիշկ մը բաժնաւորի , ամենն ալ կուղեն բժիշկ ըլլալ և կամ իրենց տղաքը բժիշկ ընել և կամ՝ նոյնպէս երբ ճարտար փաստարան մը բիջ շատ քաջալերուի , այն աստե՛ն ամեն մարդ կը փախարի որ ինքն ալ փաստարան ըլլայ և կամ դաւալը փաստարան ընէ , առանց մտածելու որ եթէ ամեն մարդ բժիշկ դառնայ , հիւանդն ո՛վ ըլլայ , և եթէ ամեն մարդ փաստարան լինի , գործ և դատ ունեցողն ո՛վ ըլլայ :

Ուստի իմ խոնորհ կարծիքս այն է որ գործ ունեցողէ շատ փաստարան , հիւանդէ շատ բժիշկ և կարգացողէ շատ խմբագիր գտնուելու չէ :

Մեր այս առաջարկութիւնն ալ 57 անոյց խընդրոյ վրայ աւելցնելով՝ Ազգային ժողովոյ որոշմանը կենթարկեմք :

(Յաւրդը Խոսով)

ՄԱՍՆԱԻՈՐ ԱԶԳԻ

Ա. Յ. Յ. Պ. — Աղէկ ըրիր որ խմբագրութեան ասպարէզէն քաշուեցար . իրաւունք ունիս եղեր :

Ա. Թ. Պ. — Անցած օրուան դիտողութիւնդ շատ ճշմարիտ է . բայց հետո չէ այն ատենն՝ ուր ամեն բան պիտի յայտնուի :

Ա. Յ. Ա. — Ներեցէք որ գրկածնիդ պիտի չկրնամ հրատարակել , որովհետեւ Մամուլի նկատմամբ թերթիս մէջ առ այժմ բան չպիտի հրատարակեմ , սրբոյի սլ որ ինձ համար նպատուոր և պատուարեր լինի , և նորա հաղարովել գայթակղական գործերը երևան հանելու ծառայէ , ևս ինքս ալ արդէն խիստ շատ բան դիտեմ . բայց կը վերսպահեմ , ի հարկին զինքը խաղբ ու խայտառակ ընելու համար և այդ օրն արդէն շատ մտ է : Մենք կըսէինք թէ բանակաւոր մտնելու չենք զիջանիր , և ահա մեր ըստն հաստատեց իր գոհելի լեզուովն ու հրատարակութիւններովն , որ իր յաւիտեանական դատակնիքն են :

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻՔ

Եւրոպացւոց տարեգլխոյ առթիւ Պատր. Գեր. Փոխանորդը , Գեր. Տ. Յ. Մկրեան և Մեծ. Գ. Ապուսլլահ էֆէնտի ի գիմաց Կձեն. Ս. Պատրիարք Հօր Եւրոպական տէրութեանց դեսպաններուն զնային ի շնորհաւորութիւն :

— Սերաստիոյ բանտարկեալք տակաւին ազատուած չլինելով Պատր. Գեր. Փոխանորդը նախընթաց օրը դարձեալ Գատական գործոց նախարար Վսեմ. Ճէվտէթ փաշային երթալով երկարօրէն անսակցեցաւ :

Ն. Վսեմութիւնն հեռագրաւ անգու հըրաման զրկեց վերստին առ կուսական որպէսզի բանտարկեալներն արձակէ :

— Գոհութեամբ կը տեղեկանամք թէ Գուրգէնեան վարժարանի աշակերտք ի նըպաստ Հայկական—Սրուէստասէր ընկերութեան 320 զրուշ հանգանակեր են :

Ի նպաստ սովելաց ալ թատերական ներկայացում մը տալու որոշում ըրեր են :

Ուրախ եմք որ յիշեալ վարժարանի աշակերտք ալ այժմէն կ'սկսին ազգասիրութեան գործնական ասպացոյցներ տալ , որ արդինք է հարկաւ իրենց աւանդուած բարեք դատարարակութեան , որում մեծ խնամք կը տանի վարժարանին հիմնադիր—տեսուչ Մեծ. Յ. Գուրգէն էֆէնտի :

— Տիգրիսէն հասած տեղեկութիւններէ գոհութեամբ կ'իմանամք թէ Մեղու Հայաստանի ազգօգուտ լրագիրն յառաջիկայ տարեգլխէն սկսեալ ամեն օր պիտի հրատարակի :

Աւասիկ հզօր ասպացոյց մ'ալ Ռուսահայոց մտաւորական վիճակին զարգացմանն , որ Թրքահայոց վիճակին հետ բաղդատելով մեծ յառաջադիմութիւն ըրած է :

— Խիզանու Ուսումնասիրաց ընկերութիւնը կը խնդրէ մենէ ծանուցանել առ համայն երեսփոխանս ընկերութեան թէ վաղն ընդհանուր ժողով պիտի գումարի Կէտիկ—փաշայի նորակաւոյց վարժարանին մէջ :

— Սամաթիոյ Հայկական Ընկեր. գործադիր ժողովն ալ կը փութայ ծանուցանել թէ Մեծ. Կ. Փանոսեան էֆէնտի յիշեալ ընկերութեան գրօսարանին մէջ այս դիշեր ժամը Յին բանախօսութիւն մը պիտի ընէ :

Նիւթ ընտրած է « ազգային թերութիւններ » . դաշնակահարութիւն ալ տեղի պիտի ունենայ :

Սոյն երեկոյթին փառաւորութեանն և ընտանեաց հանգստութեանն համար ամեն ջանք և աշխատութիւն ի դորձ դրուած է :

— Մասիսի միամսեայ դադարման պայմանաժամն յառաջիկայ երեքշաբթի լրանալով չորեքշաբթի օրունէ պիտի սկսի դարձեալ հրատարակիլ :

**ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ**

Վախճանեալ Սրապեան Պաղտասար աղայի գրավաճառութեան խանութն, որ ի Մէրճան չարչը թիւ 33, Աշճեան Պ. Յովհանի անցած ըլլալով, կը ծանուցանէ թէ ամեն տեսակ գրքեր կը ծախուին յիշեալ խանութըն, ուր և դպրոցական պիտոյից վերաբերեալ ամեն տեսակ յանձնարարութիւնք ևս կընդունուին:

5-5

**ՊԱՏԿԵՐԱԶՍԻԴ**

**ՀՈՉՍԿԱՒՈՐ ՈՃԻՐՔ**

**ՍԷՆ ԺԷՐԱՆ ԿՈՄՍՈՒՀԻՆ**

Հեղինակ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ  
Թարգմանիչ Մ. Յ. Մէլիքեան  
Հրատարակիչ Ս. Ղ. Պարպեղյանեան

Սոյն հետաքրքրական պատմութիւնը Հայրենիքի խմբագիր Մ. Յ. Մէլիքեան էֆէնտախի թարգմանութեամբ ՚ի լոյս ընծայեալ ըլլալով, կը ծախուի Ս. Ղուկասեանի գրատունը և ուրիշ գրավաճառաց քով ի գին 6 դրուշ:

**ՄԵԾՍՊԱՏԻ ՄՈՒՐԱՅԿԱՆՆԵՐԸ**

Գրեց Յ. Յ. Պարսնեան  
Հրատարակիչ Ս. Ղ. Պարպեղյանեան

Ազգային ժամանակակից վէպ մ'է, որ տեսք առ տեսք սկսած է հրատարակուիլ, երբորդ տեսքը ի լոյս ընծայուած ըլլալով, կը ծախուի գրավաճառ Ս. Ղուկասեան և Ճրէնկեան գրատունները, սուճի Պօղոս աղայի խանութը և լրագրավաճառներու քով ի գին 40 վարայ:

**ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ**

**1 8 8 1**

**ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ**

Գին 100 ՓԱՐՍ

ՅՕՐԻՆԵԼ ՅԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԷ ԽԱՍԳԻՒՂԻ

Ս Ե Պ Հ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս. ՓՐԿՁԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ

**ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ**

Պարոնակութիւն

Վիճակագիր տէրութեանց. — Հայրապետութիւն Հայոց. — Հայաստան աշխարհ կամ Արմենիա. — Օսմանեան միջազգային թղթատարութիւնք. — Ժամանակացոյց սուրհանդակաց Օսմանեան միջազգային թղթատարութեանց. — Եւրոպական նամակատունք ի Կ. Պօլիս. — Յուցակ գնոց թղթատարութեանց և հեռագրութեանց Եւրոպական և Ասիական քաղաքաց թուրքիոյ. — Սակագին հեռագրի ըստ նոր կարգադրութեանց միջազգային թելերու. — Ընկերութիւնք չոգեչարժ նաւարկութեան, ինչպէս են, Եզիպտական (Խաիվիյէ). — Մախսուսէ. — Աւստրո-Հունգար Լոյս. — Մէտաժըրի Մարիթիմ. — Բաքէ էնէ և ընկերութիւն. — Ռուսական ընկերութիւն. — Ընտանեկան գեղարան:

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԻՄՔԱԳԻՐ  
Հ. Ե. ԳԻՄԱՔՍԵԱՆ Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՔԱՅԷԼ ՍԱՐՇԵԱՆ  
Մէրճան չարչի Ռիչարտ էֆ. խանի տակ թիւ 20